Ուժեղ երիկամներ

ՊԱՇՏՊԱՆԵՔ ձեր երիկամները, ՊԱՇՏՊԱՆԵՔ ձեր ապագան

(ԵՔՀ) Երիկամային քրոնիկ հիվանդության բեռը Եվրոպայում

Երիկամներ՝ փոքր չափեր, մեծ ազդեցություն

Երիկամները, չնայած իրենց փոքր չափերին, կենսական օրգաններ են, որոնք կատարում են կարևոր գործառույթներ: Այս երկու լոբաձև օրգանների կարևորագույն դերերն են՝

- Արյան զտում ՝ մնացորդային նյութերի, տոքսինների և հեղուկների հեռացում
- Ոսկրերի առողջության ապահովում
- Հանքային հավասարակշռության պահպանում
- Կարևորագույն հորմոնների արտադրություն

Երիկամները կարող են օրական զտել մոտ 180 լիտր արյուն:[1]

Երիկամային քրոնիկ հիվանդություն՝ «Լուռ ճգնաժամ»

ԵՔՀ դեպքում խանգարվում է երիկամների կառուցվածքը կամ գործառույթը:[2] Վաղ փուլերում ԵՔՀ-ն հաճախ ասիմպտոմատիկ է՝ ոչ սպեցիֆիկ ախտանիշներով,[3] գործառույթների զգալի քանակը տուժում է մինչ ախտորոշումը: Ուստի, շատերը չգիտեն իրենց խնդրի մասին:

Ինչու՞ է դա կարևոր. խնդիրը խորացող է

Ամբողջ աշխարհում միլիոնավոր մարդիկ ունեն ԵՔՀ, և ակնկալվում է, որ այդ բեռը կավելանա' կապված ռիսկի գործոնների ավելացման հետ: Ռիսկի գործոններն են շաքարային դիաբետը, զարկերակային գերճնշումը, ճարպակալումը և բնակչության ծերացումը:[4]

Ամբողջ աշխարհում չափահաս բնակչության 13% -ը ապրում է ԵՔՀ-ով:[5]

ԵՔՀ-ն Եվրոպայում՝

- Ազդում է 100 միլիոն մարդու վրա[6]
- Ծախսերը կազմում են տարեկան 140 միլիարդ եվրո (չներառելով աշխատունակության անկումը)[7]

100 M

ԵՔՀ-ն ամբողջ աշխարհում՝

- Ազդում է 850 միլիոն մարդու վրա[8]
- Աշխարհում մահվան 11-րդ հիմնական պատճառն է[9]
- Կանխատեսվում է, որ մինչև 2050 թվականը այն կդառնա մահվան 5-րդ պատճառը[10]

ԵՔՀ-ի ճգնաժամի լուծումը համատեղ ջանքերով

ԵՔՀ-ն հաճախ թերագնահատվում է թե պացիենտների, և թե առողջապահական մասնագետների կողմից, չնայած այն հանգամանքին, որ հիվանդության առաջընթացը կարող է զգալիորեն դանդաղել ռիսկի գործոնների վաղ հայտնաբերման և կառավարման շնորհիվ:

Հետևաբար, մենք կոչ ենք անում քաղաքական գործիչներին, առողջապահական մարմիններին և առողջապահության ոլորտի մասնագետներին միավորել ջանքերը՝ յուրաքանչյուր երկրի քաղաքական օրակարգում ԵՔՀ-ի խնդիրը առանցքային առաջնահերթություն դարձնելու համար:

Որպեսզի՝

- Բարելավվի պացիենտի առողջական արդյունքները
- Հնարավոր լինի խուսափել դիալիզի կամ փոխպատվաստման անհրաժեշտությունից
- Պահպանվի կայուն առողջապահական համակարգ

Անհրաժեշտ է՝

- Բարձրացնել ԵՔՀ-ի վերաբերյալ տեղեկացվածությունը հասարակության և առողջապահության ոլորտի մասնագետների շրջանում
- Ամրապնդել առողջապահական քաղաքականությունը՝ պացիենտների բուժական արդյունքների և որակի բարելավման համար
- Իրականացնել համակարգված սկրինինգ՝ ռիսկի խմբերը բացահայտելու և նրանց աջակցելու համար
- Յուրաքանչյուր առողջապահական ծրագրում հատուկ ուշադրություն դարձնել երիկամների առողջությանը

Մենք կարող ենք գործել արդեն այսօր՝ ԵՔՀ-ի վերաբերյալ իրազեկումը բարձրացնելու և հետագայում դրա հետևանքները նվազեցնելու համար:

Առաջարկություններ

1.Kidney Care UK (2024). Key Facts about Kidneys. Available at: https://kidneycareuk.org/kidney-disease-information/about-kidney-health/facts-about-kidneys/

2.NHS UK (2023). Overview. Chronic Kidney Disease. Available at: https://www.nhs.uk/conditions/kidney-disease/

3.Fraser, S.D. & Blakeman, T. (2016). Chronic kidney disease: identification and management in primary care. Available at: https://pubmed.ncbi.nlm.nih.gov/27822135/

4.Luyckx, V.A. et al (2019). Reducing major risk factors for chronic kidney disease. Available at: https://pubmed.ncbi.nlm.nih.gov/30675422/

5.Duff, R. et al (2024). Global health inequalities of chronic kidney disease: a meta-analysis. Available at: https://pubmed.ncbi.nlm.nih.gov/38389223/

6.Vanholder, R. et al (2021). Fighting the unbearable lightness of neglecting kidney health: the decade of the kidney. Available at: https://pubmed.ncbi.nlm.nih.gov/34221379/

7.Mil, D.V. (2023). Cost-effectiveness of screening for chronic kidney disease: existing evidence and knowledge gaps. Available at: https://pmc.ncbi.nlm.nih.gov/articles/PMC10783263/

8.Francis, A. (2024). Chronic kidney disease and the global public health agenda: an international consensus. Available at: https://www.nature.com/articles/s41581-024-00820-6

9.Institute for Health Metrics and Evaluation (n.d.). Chronic kidney disease – Level 3 cause. Available at: https://www.healthdata.org/research-analysis/diseases-injuries-risks/factsheets/2021-chronic-kidney-disease-level-3-disease

10.Vollset, S.E. (2024). Burden of disease scenarios for 204 countries and territories, 2022-2050: a forecasting analysis for the Global Burden of Disease Study 2021. Available at: https://www.thelancet.com/journals/lancet/article/PIIS0140-6736(24)00685-8/fulltext